№ 125 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 1 **1890** ՀԻՆԳՇԱԲԹԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 1 № 125

ՏԱՍՆ ԵՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարւանը 6 րուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում դրւում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունւում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարւում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ԱՌԱՋԻԿԱՅ **1891** ԹԻԱԿԱՆԻՆ

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

կը հրատարակւի Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրօգրամայով: Մենք կը ստանանք սեփական ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 րուբլի է, վեց ամսւանը 6 րուբլի.

Գրվել «ՄՇԱԿԻՆ» կարելի է ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ (Բարօնտակայա և Բաղդասարեան փողոցների անկիւնում, թամաշեվի տանը).

կայսերութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար պէտք է դիմել հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունւում են թէ հայերէն, թէ ռուսերէն և թէ օտար լեզուներով. բառին վճարւում է 2 կոպէկ.

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ յայտարարում է ընդհանուր գիտութեան, որ ներկայ 1890 թւի նոյեմբերի 4-ին, կիրակի օր, Գումայի դահլիճում, առաւօտեան 9 ժամին՝ կայանալու են առաջին կարգի ձայնատուների ընտրութիւնները, առաջիկայ 1891—1894 քառամեակի համար: 2—3

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Լազարեան ճեմարանի հոխտատուն և հինգամեայ տարեդարձի հանդէսը. Հայաստեաց բարեգործական ընկերութիւնը. Տխուր երեւոյթներ. Նամակ Ախալցխայից. Նամակ Արդուվինից. Նամակ խմբագրին. Բարեգործական ընկերութեանը տուած յայտարարութիւնը. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կ. Պօլսի Պատրիարքարանների խնդիրը. Արտաքին լուրեր. —ԹԱՌՆ ԼՈՒՐԵՐ. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՐՈՒՍԱ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ԵՕԹԱՆԱՍՈՒՆ ԵՒ ՀԻՆԳԱՄԵԱՅ ՏԱՐԵԴԱՐՁԻ ՀԱՆԴԷՍԸ

Այսօր՝ հոկտեմբերի 24-ին, Լազարեան ճեմարանը չքեղ կերպով կատարեց իր 75-ամեայ տարեդարձը: Հայ և ռուս եկեղեցիներում պատարագի և Լազարեան տոհմի յիշատակին հոգեհանգստի կատարելուց յետոյ՝ փառաւոր հանդէս էր ճեմարանի դահլիճում՝ ներկայութեամբ Մօսկվայի գիներալ-նահանգապետ իշխան Դոլգօրուկովի, ուսումնարանական շրջանի հոգաբարձու կոմս Կանկրինի, համալսարանի պրօֆեսօրների (թւով 7), Մօսկվայի դիմնազիաների և այլ և այլ ուսումնական հաստատութիւնների ներկայացուցիչների, բազմաթիւ տիկինների, հայ հասարակութեան անդամների, նախկին և ներկայ ուսանողների: Հանդիսականները բազմեցին ընդարձակ սեղանի չուրջը՝ թագաւոր կայսեր պատկերի առաջ, որ զարդարված էր՝ կանաչադեղ բոյսերով և ծաղիկներով: Սեղանի մօտ դրած էր ամբիօնը և նրա հետը բարձրանում էր՝ Լազարեանների վերջին ներկայացուցիչ Խաչատուր Լազարեանի՝ հայ հասարակութեան ծախսով կանգնած սպիտակ մարմարիոնեայ կիսարձանը՝ զարդարված խոշոր դափնեայ պսակներով: Նոյնպիսի պսակներով զարդարված էին և կիսարձանի չուրջը կախված Լազարեան տոհմի 3 գլխաւոր ներկայացուցիչների—պղպատա Ղազարի և ճեմարանի հիմնադիր Եղբայր Յովհաննէս և Յովակիմ Լազարեանների մնձադիր ձիթհանների պատկերները:

Հանդէսը սկսվեց աշակերտների երգեցիկ խմբի աղօթքով (հեղինակութիւն խալացի Գօրչիանի) ընկերակցութեամբ պիանօի, յետոյ ճեմարանի վերատեսուչ Գ. Քանանեանց ամբիոն բարձրանալով՝ կարդաց ուսումնարանի 75-ամեայ հետևաբար զարգացման և գործունէութեան զեկուցիկ կազմած և հետաքրքրաշարժ պատմութիւնը, որին հետևեց հանդիսականների բուռն ծափահարութիւնը: Այդ ճառը՝ ճեմարանի կեանքին յատկացեալ մի քանի այլ վաւերաթղթերով, վիճակագրական տեղեկութիւններով, որպէս և յօբելեանի օրը ստացած բազմաթիւ ուղերձներով և շնորհաւորութիւններով լոյս կը տեսնի մի քանի ամսից յետոյ, որին կը ծանօթանայ մանրամասնօրէն հայ հասարակութիւնը: «Մշակի» ընթերցողներին թէև համառօտ՝ բայց արդէն յայտնի է ճեմարանի 3 քառորդ դարվայ պատմութիւնը իր նախընթաց նամակից:

Վերատեսչի ճառից յետոյ Լիկէօնի խորհրդի քարտուղար Գ. Խալաթեան և գիմնազիօնի ֆրանսավարժական խորհրդի քարտուղար պ. Կուզրեավցեվ կարդացին ճեմարանի ուսումնական և տնտեսական տարեկան հաշիւները: Ապա բարձրացան ամբիօն մէկը միւսի հետից.—ճեմարանի նախկին աշակերտ՝ այժմ փոստաբան Նոր-Նախիջևանում պ. Զալխուշեան, որ արևելեան պերճախօսութեան և բանաստեղծական համեմատութիւնների ծաղիկներով պաճուճած գեղեցիկ ճառով ջերմ, սրտանց ողջունեց ճեմարանի 75-ամեակը.—Մօսկվայի Կայս. Հնագիտական ընկերութեան քարտուղար պ. Տրուտովսկից, որ ներկայ էր ընկերութեան փոխնախագահ պրօֆէսօր Անուչինի հետ, ողջունելով ճեմարանը, որ իր արևելեան լեզուագիտութեամբ ահագին օգուտներ է տուել և տալիս հասարակութեան և գիտութեան. նոյն իսկ Հնագիտական ընկերութեան արևելեան բաժնի կազմակերպութիւնը և գոյութիւնը, ասում էր նա, ի միջի այլոց անկարելի, էր երևակայել առանց ճեմարանի անմիջական մասնակցութեան և ձեռնաւորութեան:—Հին-Նախիջևանի դումայի և Մարդասիրական ընկերութեան երկու պատգամաւոր պ. պ. Զարըխեան և Զալխուշեան ուղերձներ կարդացին իրանց յանձնարարած հաստատութիւններից՝ շնորհաւորելով ճեմարանի այդ նշանաւոր օրը և բարեմաղթութիւններ անելով նրան ի դէմս նրա վերատեսուչ Գ. Քանանեանցի. յետոյ նոյն պ. Զարըխեան՝ իբրև տեսուչ Նախիջևանի գպրանոցի, ողջունեց ճեմարանը այդ ուսումնարանի կողմից և իբրև նախկին աշակերտ ճեմարանի ուսերջանկ իր կողմից ևս մի ուղերձ լատին լեզուով: Այլ և այլ ուղերձների թւում՝ յիշելու է ճեմարանի նորաւարտ աշակերտների և այժմ Լիկէօնի և համալսարանի ուսանողների ուղերձը, որ կարդացին պ. Բէրբէրեան—հայերէն և պ. Վէսէլօվսկից—ռուսերէն:

Այնուհետև՝ Գ. Խալաթեան կարդաց այդ օրը ստացած բազմաթիւ նամակներից և հեռագրներից մի քանիսը, որոնք բուռն ծափահարութիւնով էին ընդունվում հանդիսականներից: Դրանցից նշանակելու է. Հնարհատուրեանների՝ Պետերբուրգի համալսարանի արևելեան ֆակուլտէտից, Մօսկվայի համալսարանի բէկտոր՝ պրօֆէսօր Իվանովից, Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձու պ. Եանովսկուց, Էջմիածնի ճեմարանի ուսուցչական խմբից, Պետերբուրգի հայ եկեղեցիների խորհրդի կողմից՝ նախագահ Եաղուբեանի ստորագրութեամբ, ճեմարանի նախկին պրօֆէսօր հանգուցեալ Տ. Էմինից, որ հիւանդութեան պատճառով բացակայ էր, պրօֆէսօր Օքրօմչեդլովից, նախկին աշակերտ գիներալ-էկզեկուտոր Տէր-Ասատուրովից, գաղտնի խորհրդական Լօմիձէից, (որ ճեմարանի հնագոյն աշակերտներից է), պրօֆէսօր Շերեմետևից, պրօֆէսօր Մելիէրից, պրօֆէսօր Նիկոլսկուց, Կովկասի գրաքննական տեսանի ցենզօր Գր. Կարախանեանից, ճեմարանում այժմ ուսանող բազմի աշակերտների ծնողներից պ. Ալանեանի ստորագրութեամբ, «Ազբիւրի» խմբագրութիւնից, Մօսկվայի երրորդ գիմնազիօնի վերատեսչից, Մօսկվայի Առևտրական Ակադեմիայի վերատեսչից, Սերպուխովի պրոգիմնազիօնից, բազմաթիւ նախկին աշակերտներից, որոնք ալումած են Ռուսաստանի հեռաւոր սահմանները, մանաւանդ Կովկասի ու Անդրկովկասի չատ քաղաքներից, նոյնպէս և Պօլսից՝ նախկին աշակերտ Գր. Զանչեանից և դեսպանատան քարտուղար պ. Մաքսիմովից և այլն և այլն: Ստացված շնորհակալութիւնների թիւը, որ դեռ ևս դադարած չէ, հասնում է մօտ 100-ի:

Հանդէսը աւարտվեց առաջադէմ աշակերտների պարգևաբաշխութեամբ. մէդալները և չքեղակազմ գրքերը յանձնում էր աշակերտներին ինքը իշխան Նահանգապետը, որ վերջապէս շնորհակալութիւն յայտնելով ճեմարանի վերատեսչին այսպիսի պատուական հանդիսի համար և գովելով ուսումնարանի հսկայաքայլ առաջադիմութիւնը և պայծառութիւնը, մղեց դահլիճը: Կից սենեակներում մէջի սեղան էր պատրաստած հանդիսականների համար, ուր մատուցվեց և չամպայն: Այստեղ իշխան Նահանգապետը առաջարկեց թագաւոր Կայսեր կենացը, յետոյ լուսաւորութեան մինիստր Կոմս Դելեանովի, Լազարեան ճեմարանի յարատև բարգաւաճման և ներկայ վերատեսչի՝ ռուսասիրութեան հանդիսաւոր Գ. Քանանեանցի կենացները:

Տօնախմբութիւնը վերջացաւ ընկերական ճաշկերոյթով «Էրմիտաժ» հիւրանոցում՝ մասնակցութեամբ աւելի քան 70 անձինքների: Նոյն օրը հանդիսաւոր ճաշ էր պատրաստած ճեմարանում Լիկէօնի և համալսարանի ուսանողների և բոլոր աշակերտների համար, իսկ երեկոյեան՝ օթեակներ էին վերցրած Մեծ թատրոնում և ցիրկում:

Մօսկվա. Նախկին սաներից մէկը

ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Աչխատանքի բաժանման գաղափարը, ինչպէս երևում է, մինչև այժմ էլ չէն հասկացել այն ինտելլիգենտ համարվող կտակաց, որոնց ձեռքումն է գտնվում Թիֆլիսի Հայուհեաց Բարեգործական ընկերութեան գլուխը: Հիմնելով մի առանձին կանանց ընկերութիւն այն ժամանակ, երբ Թիֆլիսում կար տղամարդկանց բարեգործական ընկերութիւն, անկասկած, հիմնադիր կանայք ներչնչված էին այն մտքով, թէ կանանց ընկերութեան նպատակը պիտի լինի օգնութեան ձեռք կարկառել յատկապէս կարօտ աղջիկներին և կանանց, մի խօսքով իգական սեռին պատկանողներին: Եւ դա համակրելի միտք էր և է: Յատկապէս կանանց ընկերութիւն հիմնելով, մի կողմից կարելի էր համոզել հասարակութեանը՝ թէ կինն էլ կարող է մի անկախ հասարակական գործ կատարել, իսկ միւս կողմից աւելի չատ և աւելի չատ օգնութիւն հասցնել իգական սեռին պատկանողներին,—և այդպիսով մի տեսակ աչխատանքի բաժանում մտցնել՝ բարեգործութեան գործի մէջ:

Սակայն, տարաբաղդաբար, այդ քանը չատ անաչող կերպով է իրականացվում: Մեր «Հայուհեաց ընկերութիւնը» իր այդքան տարվայ գոյութեամբ կարծէք միչտ աչխատում է համոզել, որ ինքը չատ անզգայ է և չատ թոյլ արձագանք է տալիս ընթացիկ պէտքերին: Ընկերութիւնը մի անգամ վճռել է, դիցուք, մի զպրոց պահել, կամ մի որդեգիր ունենալ, և ահա նա իր աչքերը խփել է, և չէ ուզում տեսնել, որ կեանքի մէջ տեղի են ունենում դէպքեր, երբ անմիջապէս պէտք է օգնութեան հասնի կանանց ընկերութիւնը:

Ահա ձեզ, դիցուք, մի օրիորդ, որը չքաւորութեան և ուրիշ պատճառներով կրծոտվոտ լինելու վտանգի մէջ է: Ամենքը սպասում են, որ Հայուհեաց ընկերութիւնը վրա կը հասնի, բայց ընկերութիւնը կարծէք չէ տեսնում այդ քանը:

Ահա ձեզ մի աղջիկ, որը ուսում է առնում, բայց միջոց չունենալու պատճառով ստիպված է ուսումը կիսատ թողնել: Կանանց ընկերութիւնն այդտեղ էլ չէ երևում:

Ահա ձեզ գաւառից եկած մի աղջիկ, որը ուզում է կամ մանկավարժութիւն սովորել կամ արհեստագիտական զպրոցի քննութիւն տալ, բայց միջոց չունենալու պատճառով չէ կարողանում իր նպատակին հասնել և ենթարկվում է ծանր զրկանքների: Հայուհեաց ընկերութիւնը այդտեղ էլ չէ երևում:

Եւ այլ այդպիսի դէպքեր....

Այդ բոլորից յետոյ կինն ըստ ինքեան հարց է առաջ գալիս. եթէ Հայուհեաց ընկերութիւնը օգնութեան ձեռք չէ կարկառում կարօտ աղջիկներին և կանանց, եթէ օգնութեան կարօտ կանայք էլ ոչինչ նպաստի յոյս չեն կարող ունենալ Հայուհեաց ընկերութիւնից,—ուրեմն էլ ով պիտի հսկանայ և անի այդ քաները: Չէ որ կինը կանանց ընկերութիւնից աւելի օգնութիւն կարող է սպասել, քան թէ ուրիշ ընկերութիւններից: Չէ որ կանանց ընկերութիւնը աւելի չատ և չատ օգնութիւն պիտի անի կանանց, քան թէ մի որ և է ուրիշ ընկերութիւն:

Եւ եթէ Հայուհեաց ընկերութիւնը մի երկու զպրոց պահելով, բոլորովին անհոգ կերպով կը վերաբերվի դէպի այն հարիւրաւոր դէպքերը, ուր սպասվում է գլխաւորապէս կանանց օգնութիւնը, այն ժամանակ կը նշանակի այդպիսի ընկերութիւնը նաև՝ իր կոչմանը լաւ չէ ծառայում և երկրորդ՝ հասարակութեան համակրութեան և աչադրութեան արժանանալու վճռից դեռ չատ հեռու է:

*

ՏԽՈՒՐ ԵՐԵՒՈՅԹՆԵՐ

Վերջին ժամանակներս մեր կեանքի մէջ այնպիսի երեւոյթներ են առաջանում, որոնք ակամայ մեզ ապացուցանում են, որ մեր եթէ ոչ ամբողջ գործունէութիւնը, գոնէ նրա մեծ մասը դրված է խախուտ հիմքի վրա: Եւ այս երեւոյթները մեր մէջ ամեն օր և ամեն րոպէ կատարվում են:

Ամենից յայտնի է, որ վերջին տասնեակ տարիներում մտաւորութիւնը լինչ ահագին քայլերով է առաջ գնում. այն էլ յայտնի է, որ այդ երեւոյթը բազմում չատ հարիւ էր պատահում, չը նայելով որ նա, բացուն, լինելով առաւօտի ահագին կենտրօն, որի ամբողջ գործունէութիւնը հարիւր միլիոնների է հասնում, աւելի պէտք է ենթարկվեր դրան. բայց բաղդի բերմամբ ձգձգվում էր մինչև օրս: Վերջին ժամանակներս պատահած մի քանի խոշոր տնտեսութիւններն առիթ են տալիս մեզ մի քանի խօսք ասել դրա մասին:

Գուցէ լինի կը հարցնեն՝ լինչն է պատճառը այդ տխուր երեւոյթի, որը այս վերջին մի երկու տասնեակ տարիներում երեան է գալիս մեր կեանքում: Պատասխանը չատ պարզ է. որովհետև մեր գործունէութիւնը դրված է խախուտ հիմքի վրա, որովհետև մ ի ւ թ ե ա մ բ գործելու դաղափարը դեռ մեր մէջ չէ ընդհանրացած: Քանի

ՂԱՐԱԿ ԱԼԱՄԱՅԼՈՒՆ

Էջ. 8. գ.

Գործարար 26-ին

Ալամարա գիւղի, Նոյեմբերյան գաւառի Ս. Խաչի վանքից 5 վերստ հեռաւորութեան վրայ գտնուող Ալամարա գիւղի գործարար Ղարագիշ Ալամալեանը, որ ունի 40 տարեկան տարիք, 14-ին մեկնել է Ղարաքիլիսա (1 ր. 40 կ.) իւր տեղի գործերով, եւ այդ օրից ի վեր նրանից ոչ մի լուր չկայ։ Ալամարայի գիւղացիք, որոնց հետ նա մեծ մտերմութեան մէջ է ապրել, մեծ անհանգստութեան մէջ են նրա համար։

Հարցնում ենք գործարարի ընտանիքին, թէ ինչ միջոցներ են ձեռնարկել նրան որոնելու համար։

Ալամարայի գործարարի ընտանիքը դիմել է նաեւ Ղարաքիլիսայի ոստիկանապետին, որ հրամայել է գտնել անհետացածին։

Ոստիկանապետը հրամայել է նաեւ հարցաքննել Ալամարայի գիւղացիներին, որոնց հետ նա մտերիմ է եղել։

Ալամարայի գործարարի ընտանիքը ցանկանում է իմանալ, թէ ինչ միջոցներ են ձեռնարկել նրան որոնելու համար։

Ընտանիքը յոյս ունի, որ Ղարաքիլիսայի ոստիկանապետը կը կարողանայ գտնել իրենց հարազատին։

Հարկ ենք համարում յիշեցնել, որ Ալամարայի գործարարը ունի 3 զաւակ, որոնցից մէկը 7 տարեկան է, միւսը 5, իսկ երրորդը 3 տարեկան։

Ընտանիքի գլխաւորը մնացել է այրի եւ երեք անչափահաս զաւակների հոգսը ուսերին։

Ընտանիքի գլխաւորի անհետանալը մեծ տագնապի մէջ է գցել նրանց։

Ալամարայի գործարարի ընտանիքը խնդրում է մեզանից, որ տպագրենք նրա նկարը, որպէսզի կարողանանք գտնել նրան։

Մենք կատարում ենք ընտանիքի խնդրանքը եւ տպագրում ենք նրա նկարը։

Ալամարայի գործարարի ընտանիքը խնդրում է մեզանից, որ տպագրենք նրա նկարագրութիւնը։

Ալամարայի գործարարը 40 տարեկան է, միջահասակ, ունի սեւ մազեր եւ սեւ մորուք։ Նա հագած է եղել սեւ վերարկու, սեւ տաբատ եւ սեւ գլխարկ

ՏԵՂԱԿԱՆ ԼՐԱՏՎԱԿԱՆ

— Ս. Պետերբուրգի Ռուսական երաժշտական ընկերության 29-րդ փիլհարմոնիկ համերգը տեղի կունենա հոկտեմբերի 30-ին, ուրբաթ օրը, Ռուսական ազնվականների ժողովների մեծ դահլիճում։ Համերգին կմասնակցեն տիկին Ա. Ֆրեյման (դաշնամուր), պարոն Ա. Ռոզանով (վիոլոնչել) և պարոն Ա. Ռեմենյի-Վերբովոյ (սոլո երգեցողություն)։ Համերգի սկիզբը ժամը 8-ին։

— Ֆրանսիական «Bal Masqué» երկրորդ օրաթերթը հոկտեմբերի 29-ին փոխել է իր անունը և կոչվում է «Le Temps nouveau» (Նոր ժամանակ)։ Նոր թերթի առաջին համարը լույս կտեսնի նոյեմբերի 1-ին։

— Ինչպես հայտնի է, Ս. Պետերբուրգի Ռուսական երաժշտական ընկերությունը ամեն տարի կազմակերպում է իր անդամների համար մի քանի համերգներ, որոնց մուտքը ազատ է։ Այդ համերգներին ներկա գտնվելու իրավունք ունեն միայն ընկերության անդամները և նրանց ընտանիքի անդամները։ Ընկերության վարչությունը ուզում է այդ համերգները ավելի հետաքրքրական դարձնել և ընդունել նաև ուրիշներին։ Այդ նպատակով վարչությունը որոշել է ամեն համերգի համար տալ 10 տոմս, որոնք կվաճառվեն ընկերության գրասենյակում։ Առաջին համերգը կլինի նոյեմբերի 9-ին։

— Ռուսական երաժշտական ընկերության Ս. Պետերբուրգի բաժանմունքի նախագահ Ա. Ռուբինշտեյնը հեռագրել է Մոսկվայի ընկերության նախագահ Ն. Ռուբինշտեյնին, որ Ս. Պետերբուրգի ընկերության անդամները ցանկանում են, որ Ն. Ռուբինշտեյնը համերգներ տա Ս. Պետերբուրգում։ Ն. Ռուբինշտեյնը պատասխանել է, որ նա համաձայն է համերգներ տալ, եթե միայն Ս. Պետերբուրգի ընկերության անդամները կվճարեն նրա ճանապարհածախսը

թեան դէմ էին։ Այն ժամանակ ամբոխը սպառնաց դէպովին գործադուլ անել։ Դրանից յետոյ կայացած բանաւորների միջնորդը խաղաղ անցաւ։

ՊԱՏՐԱՍ, 30 հոկտեմբերի։ Այսօր Թագաժառանգ Ցեսարեվիչը հասաւ այստեղ Տրիեստից։ Նրան դիմաւորեցին հանդիսաւոր կերպով։ Նորին Բարձրութիւնը, յատկապէս Աթէնքից եկած՝ հնութիւնների վերատեսչի ուղեկցութեամբ կայցելէ Օլիմպոսը, Էպիդաւրը և Միկէնս։ Չորեքշաբթի օր Թագաժառանգը սպասում են Աթէնքում, ուր Նորին Բարձրութիւնը երկու չաբաթ կանգկացնի։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 31 հոկտեմբերի։ Երէկ «Память Азова» և «Владиміръ Мономахъ» նաւերը Թագաժառանգ Ցեսարեվիչի հետ նաւարկեցին Պատրասից դէպի Կալամիակի։—Չինաստանի բժշկական ակադեմիայի գլխաւորը, Բիկով, հիւանդութեան պատճառով հրաժարված է իր պաշտօնից և նշանակված է ակադեմիայի պատուաւոր անդամ։

ԼՕՆԴՕՆ, 31 հոկտեմբերի։ Լօրդ-մէրի մօտ տուած ճաշկերոյթի ժամանակ Սօլսբրի ասեց, որ բոլոր նշաններին նայելով, խաղաղութիւնը պէտք է պահպանվի և բաղդատ նախագուշակութիւնների թւում հանդիսանում է ռուսաց գահի Թագաժառանգի Հնդկաստան այցելելը, որպէս Թագուհու և Հնդկաստանի կառավարութեան հիւրի. Ռուսաստանի և Հնդկաստանի գաղափարների այդպիսի անալասելի զուգադիպութիւնը կարող է երկու պետութիւններին էլ բարի հետեանքներին հասցնել և ապահովացնել երկուսի ցանկացած փոխադարձ խաղաղ յարաբերութիւնները։

ԱԹԷՆՔ, 31 հոկտեմբերի։ վատ եղանակի պատճառով, Թագաժառանգ Ցեսարեվիչի ճանապարհորդութիւնը դէպի Օլիմպիա և Միկէնա յետաձգված է։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Հոկտեմբերի 30-ին

Լծդօնի վրա 10 ֆունտ արժէ. . .	81	ր.	70 կ.
Բերլինի վրա 100 մարկ — . . .	40	»	12 »
Փարիզի վրա 100 ֆրանկ — . . .	32	»	47 »
Ոսկի — — արժէ . .	6	»	43 »
Մաքսային կուպօններ — . . .	132	»	— »
Արծաթ — — — . . .	1		10 »
Բօրսային դիսկօնտներ — . . .	5 և		6½% »
Պետ. բանկի 5% տոմս 1-ին չրջանի.	102	»	37 »
— — — — 2-րդ —	101	»	25 »
— — — — 3-րդ —	101	»	— »
— — — — 4-րդ —	101	»	37 »
— — — — 5-րդ —	101	»	37 »
— — — — 6-րդ —	101	»	— »
6% ոսկեայ փոխառութիւն	142	»	75 »
4% ոսկեայ ըէնտա	—	»	— »
Արևելեան 5% փոխառ. 1-ին չրջ.	101	»	50 »
—ը— — — 2-րդ —	101	»	75 »
— — — — 3-րդ —	103	»	75 »
Ներքին 5% առաջին փոխառութ.	231	»	— »
— — երկրորդ —	212	»	75 »
— — երրորդ ադն. կալ. բ.	210	»	50 »
Պետական. երկաթուղային բիլետա .	102	»	— »
5½% բիլետա	103	»	50 »
4% ներքին փոխառութիւն	87	»	75 »
5% դրաւ. թղթ. ադն. կալ. բանկի	100	»	37 »
4% վկայակ. դիւղ. հող. բանկի. .	103	»	37 »
4½% դրաւական թղթեր կալուած.			
փոխ. կրեդիտ. ընկեր. մեսալ. .	—	»	— »
— — — թղթակ.	93	»	50 »
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ.			
ընկերութեան օբլիգացիները. .	97	»	12 »
Մօսկվայի քաղաք. օբլիգացիաներ.	96	»	25 »
Օդէսայի — — .	100	»	— »
Թիֆլիսի — — .	—	»	— »
Դրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի.	—	»	— »
— — Ռոստովի — — .	—	»	— »

Ս. Պետերբուրգի բօրսայի տրամադրութիւնը հանգիստ է։

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Մ. Գ. ՅԼՅՏԼԻՆԻ

ԺԱՄԱՑՈՑՑՆԵՐԻ ՄԱԳԱԶԻՆԻ

ՕՊՏԻԿԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԸ



Պալատի այդու դիմաց, անկիւնի մագազինում, սպացված է մեծ ընտրութիւն՝ ոսկեայ, նիկելեայ, պողպատեայ և կրիայի ոսկորից ԱԿՆՈՑՆԵՐ, ՊԼԵՆՆԷՆԵՐ և ԼՕՐՆԷՏՆԵՐ։ Թատրօնական և դաշտային ԲԻՆՕԿԼՆԵՐ, ՋԵՐՄԱՋԱՓԵՐ, թէ անձնական, թէ դուրսը կախելու և թէ վանդակների համար։ վերատեսչված և վկայական ունեցող ՄԱԿՍԻՄԱԼ չերմաչափեր։ Լօրնէտի և պլենէնէի համար ոսկեայ, արծաթեայ, նոր-ոսկեայ չղթաներ, նմանապէս մետաքսեայ և մետալեան թելեր։

Ակնոցներ և պլենէներ արվում են նմանապէս բժիշկների պատուէրով։

Մագազինում յանձն են առնում նմանապէս փչացած իրերի նորոգելը և ապագինների դնելը։

ԳՆԵՐԸ ամենաչափաւոր են։

39—50 (5)

ԾԽԱԼՈՑԻ ԷԿՍՏՐԱԿՏ

ՆԻԿՕԼԱՅ ԲՕԳԴԱՆՕՎԻ ԵԻ ԸՆԿ.

ԱՄԵՆԱԼԱԻ ԵԻ ԱՐՄԱՏԱԿԱՆ ՄԻՋՈՑ ոչխարներին, եղջերաւոր և այլ կենդանիների բորոտութիւնից և կաշու ուրիշ ամեն տեսակ հիւանդութիւններից բժշկելու, նմանապէս ձիերին, շներին կաշու ամեն տեսակ հիւանդութիւններից և թռչուններին պարազիտներից բժշկելու համար։

ՊԱՀԱՆՈՒՄ է ամեն տեսակ ծաղիկներ, բոյսեր, ծառեր և բանջարեղէններ՝ որդից, լրից, թրթուրներից և ուրիշ միջատներից։

ԳԼԽԱՒՈՐ ՊԱՀԵՍՏ Թիֆլիսում՝ դեղագործական ապրանքների վաճառման ԲԱՐՁ. ԴՈՑՆ Հաստատված կովկասեան ընկերութեան մէջ։

17—25 (5)

ՊՐՕՖԻՋՕՐ Ա. ՇՏԷԽԵՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

ԱՏԱՄՆԵՐԻ ՑԱՒԻ ԵԻ ՓՁԱՆԱԼՈՒ ԴԷՄ

ՊՕՏՕԼԵԱՆ ԱՏԱՄՆԱԴԵՂ ԿԱԹԻԼՆԵՐ 50 ԿՕՓ.
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԿՕԿԱՑԻՆԵԱՆ ԱՏԱՄՆԱՑԻՆ ԷԼԻԿՍԻՐ 80 ԿՕՓ.
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԱՏԱՄՆԱՑԻՆ ՓՈՇԻ 30 ԿՕՓ.

ԳԼԽԱՒՈՐ ՊԱՀԵՍՏ. ԹԻՖԼԻՍՈՒՄ՝ Դեղագործական ապրանքների կովկասեան ընկերութեան մէջ և պ. պ. Շահպարոնեանցի, Մակկերի, Սէնչիկովսկու և Ագմուրովի դեղատուներում։

Зубныя капли: кор. 50 к.
Зубной порошокъ: кор. 30 к.
Зубной эликсиръ: фл. 80 к.
А. ШТЕЖЕРЪ

34—52 (4)

Օգոստոսի 7-ից 1890 թ. բացվում է երաժշտական գործիքների և նոտաների կովկասեան կենտրոնական դէպօ։

ԵՂ. Բ. ԴԻՏԷՐԻԽՍԻ

առաջին ս. պետերբուրգեան դաշնամուրային գործարանի

ՐՕԵԱԼՆԵՐ ԵԻ ՊԻԱՆԻՆՕՆԵՐ

Մ. Շրէդերի, Բէկկերի, Սմիդտի, Միւլբախի,

գէտցի, յայտնի արտասահմանեան գործարանների՝ Շիդմայերի, Բլիւտների, Բէխշտէյնի, Գլավաչի արմենապիանօ։ Շիդմայերի Հարմոնիումներ։ ԾԱԽՎՈՒՄ Է ԵԻ ՎԱՐՁՈՎ ՏՐՎՈՒՄ։ Թիֆլիս. Վօլոցօվայա փողոց, Թիֆլիսի ազնուականների կալուածական բանկի տան մէջ։

8—16

Միայն ֆարբրիկային այդ մարկա կրելով, վաւեր է համարվում.

ՄԻ՛ ՀԱԶԻՐ

Մեղրից և խոտերից պատրաստված մայց-էկստրակտ և կօնֆէտներ

Լ. Գ. ՊԵՏՇ ԵԻ ԸՆԿ. ԲՐՅՍԼՅՈՒԻ ՄԷՋ։

Քիմիական վերլուծութեամբ և բժշկական փորձերով ապացուցված է, որ այդ պրէպարատները չեն պարունակում առողջութեան համար որ և է վնասակար բաղադրութիւններ, և այդ պատճառով նրանց ներմուծումը Ռուսաստան և նրանց այդտեղ ծախելը թոյլատրված է։

ԳԻՆԸ. չէջը 1 ր. 25 կ. և 2 ր. 40 կ. կօնֆէտները 30—50 կօպ.։

Գլխաւոր պահեստ Ռուսաստանում
Վ. ԱՈՒՐԻԽԻ մօտ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ, կոլօկօլնայա 18/19

վաճառվում է Ռուսաստանի բոլոր դեղագործարաններում և դեղատներում։

2—16 (ամսի 1 և 15)

Լոյս տեսաւ
վաճառվում է Թիֆլիսի գրավաճառանոցներում
ՄՏԿԻ ՄՇԱԿԸ
Խ. Մալումեանի
Գինը 50 կօպ.

ԼՕՑՍ ՏԵՍԱՒ
ժողովրդական ընթերցանութեան համար
ԱՐՆԱԳԻՆ
Լէօի։
Գինը 7 կօպէկ։
վաճառվում է գրավաճառանոցներում։

Լոյս տեսաւ
ժողովրդական ընթերցանութեան համար
„ՊՍՏԻԿ Է ԲԱՅՑ ՉՕՏԻԿ Է“։
Վ. Լանկեվիչի
Գինը 5 կօպէկ։
Ծախվում է գրավաճառանոցներում։

Լոյս տեսաւ
ժողովրդական ընթերցանութեան համար
ԽՕԼԵՐԱ.
ԵԻ ՆՐԱ ԱՌԱՋՆ ԱՌՆԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ
Բժ. Տէր-Գրիգորեանի (Թիֆլիսից)
Գինը 5 կօպէկ.

Open subscription for 1891 year
ON SOCIAL-POLITICAL AND LITERARY NEWSPAPER
„Съ обширнымъ НЕФТЯНЫМЪ ОТДѢЛОМЪ“
„КАСПІЙ“
(ИЗДАНІЕ ГОДЪ ОДИНАДЦАТЫЙ)

Значительно увеличивая съ 1 января 1891 года форматъ газеты (до размѣровъ газеты „Кавказъ“), редакція нашла возможнымъ оставить прежнюю подписную цѣну, такъ что въ 1891 году газета „Каспій“ будетъ стоить:

			р.	к.				р.	к.
Съ доставкой:	въ годъ	. . . .	7	—	Съ пересылкой:	въ годъ	. . . .	8	50
» »	на полгода	. . . .	4	—	» »	на полгода	. . . .	5	—
» »	на 3 мѣс.	. . . .	2	50	» »	на 3 мѣс.	. . . .	3	—
» »	на 1 мѣс.	. . . .	1	—	» »	на 1 мѣс.	. . . .	1	50

Допускается разсрочка платежа подписныхъ денегъ по соглашенію съ редакціей, но съ тѣмъ, однако-жъ, условіемъ, чтобы при подпискѣ было внесено не менѣе 3 руб. для городскихъ и 4 руб. 50 коп. для иногородныхъ подписчиковъ, 15 февраля 2 р. и 15 марта 2 руб.

КРОМѢ ОБЫЧНЫХЪ ГАЗЕТНЫХЪ ОТДѢЛОВЪ,

„Каспій“ имѣетъ обширный „Нефтяной отдѣлъ“, спеціально преслѣдующій разработку вопросовъ русскаго нефтянаго дѣла. Въ составъ этого отдѣла входятъ: а) руководящія статьи по русской нефтепромышленности, б) статистическія свѣдѣнія о добычѣ, переработкѣ и экспортѣ русской нефти, в) таковыя-же статистическія свѣдѣнія объ американской нефтепромышленности, 1) цѣны на главнѣйшихъ рынкахъ на нефтяные продукты въ Россіи и за границей и д) мелкія замѣтки, сообщенія и статьи, до нефтяной промышленности относящіяся.

Подписныя деньги адресуются; г. Баку, въ контору газеты „Каспій“, д. Красильникова. Въ Тифлисѣ подписка принимается при редакціи газеты „Тифлисскій Листокъ“.

1—3

Редакторъ Н. Соколинскій

„ՄԻՇՈՒՆԱՑ“

ՄԿՆԵՐ ԿՈՏՈՐԵԼՈՒ ԻՒՍ ԴՈՒՏՄԱՆԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

գլխաւոր պահեստը գտնվում է Թիֆլիսում և Բաքւում, Բարձրագոյն հաստատված դեղատան ապրանքների վաճառման Կովկասեան ընկերութեան մօտ։

10—50 (5)

ԷՖԱՆԱԳԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

(Միքայէլեան կամուրջ, № 52)

ՏՐՎՈՒՄ ԵՆ ՀԱՅԵՐԷՆ ԴՐՔԵՐ։ Ամման վճարը 20 և 10 կօպէկ։ Բաց է առաւօտեան 9½—2 ժամը, և երեկոյեան 4—7 ժամը։ Իսկ կիրակի օրերը 9½—12 ժամը

7—10

Дозволено цензурою, Тифлисъ 30 Октября 1890 г.

Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовск. ул. д. каз.